ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ
ԵՒ ԳՐԱՄ
ՊՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD.
22, Ormiston Road,
Shepherd's Bush.
London, W. (Angleterre)

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով եւ ժողովրդի համար:

Իւրաքանչիւրի եւ ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն:



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ . . . . . 5 ֆր.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ . . . 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ . . . ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը:

Արեան ճահիճներ — ահա ազատութեան ճանապարհը:

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր եւ ձեռք բեր:

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 7. ՆՈՅԵՄԲԵՐ. Nr 7. | 1895 | ՄԻԱՄՍԵԱՅ

ՍՏՈՐ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Այդ նենգաւոր խաբեբան, որ պէտք է վաղուց փտած լինէր, աջողակ աքայիներ ունի նաև Եւրոպայի համար: Ասում են, որ նա սաստիկ խմող է, Մուհամմէդի այդ շուքը, հաւատացեալների այդ խալիֆան: Նա խմում է արդելված գինին նոյնքան մեծ հաճոյքով, որքան և հայի արիւնը: Եւ գինու շոգին նրա անձի հրամանատարն է: Պէտք է խոստովանվել, որ այդ հրամանատարութիւնը մինչև օրս նրան լաւ ծառայութիւններ տվեց:

Տեսնո՞ւմ էք այդ „վեց մեծ հզօրներին“. երբէք և ոչ որից նրանք այնքան չեն ծաղրվել ու ստորացել, որքան հարբեցող զզուելի խալիֆայի տված խելագար աքայիներից: Աշխարհն ապշել է այդ չեղած տեսարանի վրայ և ամօթի կարմրութիւնը, հակառակ դիպլօմատական հաստ դիմակի, դրա տակից դուրս է ընկնում պարծենկոտ, դատարկախօս ու եսամոլ եւրօպական տէրութիւնների երեսի վրայ: Ասես թէ ամօթի այդ կարմրութիւնը հայկական արեան ցօղերն են:

Այն ՅՕՆ-Ռուլը, որ նոյնքան ողորմելի է, որքան կատաղի է մարդարէի փոխանորդը և որքան բռնամոլ ու դաւանենգ է հիւսիսային Աղատասպանը, — այդ ՅՕՆ-Ռուլը դողաց թիւրք իդիոտի խելացնոր զառանցանքներից և ամօթալի կերպով իր նաւը խեցգետինի պէս յետ-յետ քաշեց Մառմառայի հէնց բերանից, Դարդանէլի ջրերից:

Սարսափած աշխարհի աչքի առջև նրանք, վեց ստոր պետութիւնները, սառնարիւն կերպով թոյլ տվին տասնեակ հազարաւոր մարդկանց կոտորածը մի մարդու ձեռքով, որին իրանք „դիակ“ են անուանում: „Դիա՜կ“... Ի՜նչ հեգնական քըմծիծաղ... Դիա՜կ... այո՛, որ իր նենգութեամբ վարակել է բոլոր „քաղաքակիրթ, կենդանի“, բայց մեռեալ տէրութիւններին, որ նրա գործակիցն են անլուր ոճրագործութիւնների մէջ:

Շատ լաւ. բայց թող նրանք իմանան, որ Երևելեան գործում մենք մէկ այժ ենք, որի հետ պէտք է հաշիւ տեսնել, մի դեր ենք խաղում, որ չէ կարելի անգիտանալ հէնց թէկուզ խաղաղութեան նկատմամբ, և որ մեր ձայնն ունի իր բաժինն այդ խնդրի լուծման մէջ: Այդ բաժինը մենք ձեռք բերինք այն կոտորածներով, որ գարշելի գաղանը կատարեց Եւրոպայի լուռ գործակցութեամբ. մենք այն ձեռք բերինք և աւելի այն պատմական շարժումներով, որ Կ. Պոլիսը դղրդեցրեց և ՅԷՅԹՈՒՆի գագաթին ցցեց մեր Աղատութեան դրօշակը:

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒԻԷՐ ՏԻԿԻՆ Մ. Ն... ԻՆ.

(Շարունակութիւն) [1])

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

XI

„ԴՕՆՈՒԶ ԹՕՓԻ“

Թուխ ամպերը սպառնական, երևոյթով, մէկը միւսի ետևից դուրս էին պրծնում հարաւային հորիզոնից: Փայլակը նրանց առաջնորդում էր և թանձր խաւարում կարծես ճանապարհ ցոյց տալիս քամու ձեռքին խաղալիկ դարձած և անսահման տարածութեան մէջ իրանց ուղին կորցրած բնութեան այդ թափառաշրջիկ ճանապարհորդներին: Իր միմեանց յաջորդող օձաձև և երբեմն լայնաշերտ լոյսով նա վայրկենական կերպով ողողում էր ամբողջ հորիզոնը: Հեռուից, լեռների և բլուրների ետևից, լսվում էր ամպերի խուլ որոտը, նրանց բողոքի մռնչիւնը կատաղի քամու դէմ... Փայլակի լոյսի տակ երևան էին գալիս Ա... քաղաքի լոթագոյն ապառաժները, որոնք դէմ առ դէմ բարձրանում էին, նման հսկայ սփինքսների, ապա նորից թաղվում խաւարի ծոցում և հազիւ հաղ նշմարվում: Նրանք կարծես հսկում էին քնած քաղաքին իբր մշտնջենական հաւատարիմ պահակներ կանգնված բնութիւնից: Ինչեր էին տեսել նրանք, քանի՞-քանի՞ հազար դարերի պատմութիւններ գիտէին այդ անխօս վկաները, ի՞նչ սոսկալի կոտորածներ էին կատարվել իրանց աչքերի առջև, որքա՞ն արիւն էր հոսել իրանց կողքերի վրայ, ինչպիսի՞ հսկաների թաքստոց էր եղել իրանց ծոցը, քանի՞-քանի՞ հերոսներ իրանց վերջին շունչն էին աւանդել նրանց գրկում, իրա՞ց վերջին հրաժեշտը տալով իրանց սիրելիներին և դառն անէծքներ կարդալով իրանց ճակատագրին և քանի՞-քանի թշնամիներ իրանց ճգնաժամին մահւան գրկում իրար գրկել և արիւնոտ շրթներով իրար համբուրել, հաշտվել և իրանց արիւնը միախառնել ու աւանդել են իրանց յետին շունչը... Դրանց ոչ մէկն էլ ոչ որին յայտնի չէ, պատմութիւնը հաղիւ իր գրչի ծայրովն է դպել այդ եղերական անցքերին: Բայց անշուշտ մէկ օր գիտութիւնը կը հասնէ այդ կողմերը և կաջողէ կարդալ նրանց և լեզու տալ անշունչ իրերին:

Անցել են դարեր, փոխվել ժամանակները, փոխվել են և սերունդները, բայց ապառաժներն այսօր էլ բարձրացնում են իրանց գլուխները միշտ սէգ, միշտ հպարտ և կարծես իբր անխօս վկաներ ականատես են լինում, ներքև, իրանց ոտքերի տակ, քաղաքում կատարված անց ու դարձերին. միշտ միևնոյն հակապատկերը, ուր մին շինում, է միւսը քանդում, ուրախութիւն, տրտմութիւն, վիշտ, տառապա՛նք, զուարճութիւն, կեր ու խում, զեղխութիւն խառն ի խուռն օրից օր իրար են յաջորդում. ատելութիւն, սէր, նախանձ, բարեացակամութիւն, ընկերատեցութիւն, անձնուիրութիւն, սպանութիւն և ամեն կարգի ողբերգական տեսարաններ երևան են գալիս կեանքի բեմի վրայ և անհետանում... Մինչդեռ հասարակական կազմակերպութիւնն այնպիսի հիմքերի վրայ է կառուցված, որ նրանից օգտվում է մի յայտնի դասակարգ միայն, մի դասակարգ, որ իշխում է վայելելով ամեն ճոխութիւն, շռայլելով իր կամքի և հաճոյքի համեմատ: Իսկ միւս կողմ՝ մէկ ուրիշ դասակարգ, աշխատաւոր ընդհանրութիւնը, դրա հակապատկերը լինելով, իբրև ստրուկ գերի իշխվում է և իր կեանքի դառն աշխատանքով կերակրում իր ճակատագրին հրամայող բռնակալներին: Մի բուռը մարդիկ կարողանում՝ են իրանց ետև գցել հազարա-

1) Տես „Ազատակի“ առաջին տարի Nrs 7—12 եւ երկրորդ տարի Nr 1—6.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԴԱՇԻՆՔ.

ԵՒՐՈՊԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԸ.

ԿՈՅՍԸ.

Իմ գլխէս մինչեւ ոտքս արիւնցս կը հոսէ,
Արիւնլայ սրտիս կոչն աշխարհին կը խօսէ.
Դիւցազնի ըստինքս, արգանդս մանկածին
Պատառուած, անարգուած է ծեռքով կատղածին:
Նա կուզէր գլուխ ընել գերի իր հարէմին,
Բայց ոչ, չեմ կընար ես ըլլալ կուր հարամին.
Ես կուզեմ ազատիլ, կաղաչեմ օգնութիւն.
Պիտ մոռնիմ — այդ է կամք, թէ չըլլայ փրկութիւն:

ԼԵՇԸ.

Պօսա, կանչէ դու փրկութեան,
Աղջիկ, դիակ քեզ կանեմ.
Մինչեւ որ զան քեզ օգնութեան՝
Ես քո հոգին պիտ հանեմ:
Թէ շատ խօսին քո պաշտպանները,
Անոնց ալ կայ աքացինները

ՁԻՆ.

Զի պիտ թողում, որ դու սպանես այդ կոյսին,
Զի Նա է լոկ զգայական իմ յոյսին.
Հիւսիսային արշէն ճանբան կտրած է,
Այն արշէն որ իր ակռաներեն սրած է,
Կուզէ երթալ Միշիկական, Հաղկատան,
Թրլել ծնոքէս իմ այդ քաղցր բուրաստան:
Զի, չեմ կընար. ես հոն ունիմ սիրուհի
Սեւամորթուհի, որ սրտիս է թագուհի:

ԸՆԶԱՌԻԹ.

Իմ ասպետական արիութիւնը
Ցակառին սրտիս մէջը չէ մարած.
Դարիբալդիի վեհ մեծութիւնը
Դէպ ազատութեան դաշտն է զիս վարած:
Ներքամ ես կոյսի փրկութեան համար.
Քոյր իմ նրէկան գերութեան՝ արդեւամբ,
Բայց թէ կուզէի զլուխդս սիրահար
Պատկուէլ Թունիսի հարսիս մեռութեամբ:

ԱՂՈՒԻՆԸ.

Իսկ ես... ես պատրաստ եմ մոռնանալցնել այդ խմբին:
Նուիրագածութիւնը պիտ լինի խմբովին.
Ես մինչ իսկ, թէ կամք առաջնորդ կըլլամ՝ ծեզ,
Ձեզ պէս ալ չեմ ուզեր լինի կոյսն ողջակէզ.
Եւ այդ աւանակէն կուզեմ վրէժ.... Առաջ, ծո...
Վէնտա էր նա հասած — կերթամ՝ Բիւզանդիոն:

ՎԱԳՐԸ.

Զը գիտեմ ի՞նչ ընել. կատեմ այդ կենդանին,
Թէեւ չեմ կընար ես ըլլալ տէր այդ մարմնին.
Ձեզ հետ եմ, բայց զիտցէք՝ առանց ընդդիմութեան
Հիւսիսի սպառնական եղբօրդս ցանկութեան:

ԱՌԻՒԹԸ.

Թէեւ իմ արիւնս կուզէ ազատութիւն,
Բայց կեանքիս կարիքսին է հիւսիսի լանութիւն.
Ես անոր միութեան խօսք եմ տուած ասպետի
Եւ անոր հետ կերթամ՝ մինչ վերն անչրպետի.
Ես գիտեմ, որ նա ալ կը զոլէ իմ ընթացքս,
Սիրիան ալ կըլլայ աշխատութեանցս իմ վարձք:

ԱՐՔԷ.

Լռեցէք, տխմարներ... Նա՛ իմն է, այդ կոյսը.
Թող ոչ մէկը ծեզմէ չը տածէ խնամք յոյսը:
Պատերազմ կը հանեմ, կերթամ Միշիկական.
Ներդաշնակութիւնը ես ձեր այդ ծեւական
Կը խախտեմ՝, այն էշի ականջին քաշելով,
Ձեր բոլոր խօսք, զգացում՝ հարութեամբս մաշելով:
Կոյսին տէր պիտ ըլլամ, երբ գայ ճիշդ ժամանակ...
Լռեցէք... կենդանի դեռ պիտ մնայ աւանակ...

?

ԽՆԴԹԸ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆԵՐ.

Հայ յեղափոխականի և հայ հարուստի միջև խօսակցութիւն:

Տեսարանն է ամեն ուրէք, երևոյթը ամենօրեայ:

Յեղափոխականը. — Հայութիւնը մեծ ճրգնաժամի մէջ է:

Հարուստը. — Անտարակոյս:

Յ. — Յեղափոխութիւնը պայթած է. ալ խաղաղութիւն յուսալը յիմարութիւն է. հայ ժողովուրդը պէտք է կռուի մինչև վերջը:

Հ. (մեն մի պարբերութեամբ). — Անտարակոյս, անտարակոյս, անտարակոյս:

Յ. — Բացառիկ, արտակարգ զոհողութիւններ պէտք են:

Հ. — Անտարակոյս, անձնուրաց մարդիկ պէտք են:

Յ. — Անձնուրաց մարդիկ կը գտնուին, միայն թէ...

Հ. (ընդմիջելով). — Միայն թէ անոնք պէտք է մեռնին, որպէսզի ազգը ազատի:

Յ. (խօսքը շարունակելով). — Միայն թէ երբ անոնք կը թողուն իրենց հանգիստը...

Հ. (դարձեալ ընդմիջելով). — Մենք ալ անոնց կը հետևինք մեր բոլոր երևակայութեամբ:

Յ. — Երբ անոնք կը վտանգեն իրենց անձը..

Հ. (միշտ ընդմիջելով). — Մենք ալ անոնց բոլոր սրտով բարի յաջողութիւն կը մաղթենք,

Յ. — Երբ անոնք, կըսեմ, կը զոհեն իրենց կեանքը...

Հ. — Մենք ալ հոգեհանգիստ կը կատարենք, ինչպէս դեռ երէկ կատարեցինք:

Յ. — Բայց հոգեհանգիստը գործին համար օգուտ մը չունի և ոչ ալ չոր մաղթանքները՝ յաջողութեան համար, այլ...

Հ. — Այլ պէտք է նաև հսկում, աղօթք, շարական, դամբանական, ողբ, ճառ, ներբող, գովեստ, երգ, ծափահարութիւն — մեռնողները սրբոց և մարտիրոսաց դասը անցնել, որով կը քաջալերուին նորեկ գործողները. բաւական չէ՞:

Յ. — Յաջողութեան համար, կըսէի, նիւթական պայմաններ ալ պէտք են...

Հ. — Հա՜, այդ ըսել կուզէիք կըսէ հարուստը (մեղմ և վարանոտ շեշտով):

Յ. — Անշուշտ, նիւթական պայմաններ, ինչպէս հաց, զէնք, ռազմամթերք, որոնք ամենքը կամփոփուին (շեշտելով) դրամ բառին մէջ:

Հարուստը այս վերջին բառին վրայ եղեկտրական ցնցում մը կրկգայ, կարծես կայծակ նահար եղած ըլլար. յօնքերը կը պռստէ և աւելի լուրջ, խոհուն կերպարանք մը կառնէ և վայրկեան մը լռութիւն պահելէ վերջ՝ կը յաւելու.

—Ճիշդ այդ էր իմ ալ մտածածս և ճիշդ այդ պատճառով է որ գործին յաջողութեանը վրայ կը տարակուսիմ:

Յ. — Վայրկեան մը առաջ չէիք տարակուսեր, հիմա ինչո՞ւ կը տարակուսիք. փոխանակ տարակուսելու, օգնեցէք:

Հարուստը՝ պահ մը մտածելէ վերջ.

—Օգնելն ալ բա՞ն է, եղբայր. գիտէք թէ ես անանկ բաներէ չեմ փախչիր. ես դպրոցին, եկեղեցիի, հիւանդանոցին միշտ օգնեմ. կուզէի յեղափոխականներուն ալ օգնել, բայց...

Յ. — Բայց ինչ:

Հ. — Բայց որու տանք, եղբայր. կուսակցութիւններ շատ կան, բաղդախնդիրներ, պռոտեստանտներ կը վխտան. եթէ ապահով ըլլայինք որ մեր դրամը նպատակին կը յատկանայ...

Յ. — Դուք եթէ օգնելու կամք ունենաք՝ կրնաք բուն գործողները զանազանել պռոտեստանտներէն և նմաններէն:

Հ. —Օ՜, այդ չըլլալիք բան է. մենք ժամանակ չունինք և խոհեմութիւն ալ չենք համարեր այդ տեսակ վտանգաւոր գործերու մօտէն հետաքրքրուիլ, ապա թէ ոչ, դուն գիտես իմ սիրտս...

Յ. — Բայց շատ հետաքրքրուելու հարկ չը կայ. գործերը ինքնին մատնանիշ կընեն գործողները, թշնամին սարսափով կը խոստովանի թէ որոնք են զինք գողացնող, անհանգիստ ընողները և բոլոր աշխարհ հիացումով կը յիշատակէ իրապէս և վճռական կերպով գործող յեղափոխական կազմակերպութեան անունը. ժողովուրդը չը վարանիր իր կեանքը զոհել նոյն կազմակերպութեան դրօշին տակ. միայն դուք ձեր դրամը տալու կը վարանիք...

Հ. — Կը հասկնամ, բարեկամ..... հայտէ՛ ըսենք թէ օգնեցինք. բայց յայտնի է թէ դրամէն առաջ զէնք հարկաւոր է և զէնքի փոխադրութիւնն ալ դժբաղդաբար անկարելի է:

Յ. — Այդ մասին դուք մի մտածէք. „դրամը կընէ պատերազմը“ — կըսէ առածը. իսկ „անկարելի“ բառը արդէն յեղափոխականներու բառարանէն արտաքսուած է. դուք միայն դրամ տուէք և մնացեալ հոգերը յեղափոխականներուն թողուցէք:

Հ. — Աղէկ, աղէկ. այդ խօսքդ ալ հաւնեցայ... ինչ ըսել է, մենք ալ ազգ չենք, մեր ալ սիրտը չի՞ ցաւիր ժողովուրդի վրայ... այո՛, ես ալ պիտի տամ իմ նպաստս... բայց ան չի՞ ամա, աղէկ միտքս եկաւ. քիչ մնաց մեծ եղը ախորժ պիտի մոռնայինք... արդեօք եւրոպական դիւանագիտութիւնը ինչ կը խորհի մեր խնդրոյն վրայ. մի՞ գուցէ զուր տեղ նոր արիւնահեղութեանց պատճառ ըլլանք. պէտք է նախ այս կէտին վրայ ըմբռնէն խորհիլ. միւս ամեն խնդիր երկրորդական են:

Յ. — Էֆէնտիս, չէ՞ որ մեր համոզումը ամենէն առաջ պարզեցինք. առանց արեան չը կայ փրկութիւն. թշուառ ժողովուրդը ալ սպասելու անկարող է: Յեղափոխութիւնը՝ խրոխտ և յանձնապաստան՝ առջևէն պէտք է քալէ. այն ատեն դիւանագիտութիւնը կամայ ակամայ վազելով կը հասնի անոր ետևէն:

Հ. — Աղէկ, ամա, ա՛յ օղուլ, խօշ մենք ալ քիչ արիւն չը թափեցինք. շիտակը ըսելով յախուռն գործերը իմ խղճիս կը դպչին. քիչ մը ալ խոհեմութիւն պէտք է. հելէ կեցէք նայինք, թող քիչ մը ժողովուրդը շունչ առնէ, հինգ տասը տարի հանդչի, վերջը նորէն կսկսինք. ասանկ գործերը մէկէն ի մէկ չեն ըլլար. հիմա կուհիմա թող մեր տէրտէրները քիչ մ՚ալ աղօթեն, թող մեր տիրացուները քիչ մ՚ալ երգեն, թող մեր դիւանագէտները նորանոր դիմումներ ընեն Անգղիոյ, Ռուսիոյ, Գերմանիոյ, Ամերիկայի... թող ուրիշ հեռատես և շրջահայեաց դիւանագետներ ալ ուշի ուշով — ի հարկին և հեռագիտակով — դիտեն ծայրագոյն Արևելքի Չինա-Ճաբօնա-Ռուսա-Անգղիական դարձուածքները որոնք ուղղակի առնչութիւն ունին հայկական խնդրոյն հետ... և երբ այդ ամենը ապարդիւն ըլլայ, այն ատեն դարձեալ ողջ ըլլան մեր յեղափոխականները. և այն ատեն տես թէ ինչ առատաձեռնութեամբ պիտի օգնէ ամենց ամեն հայ. ես այն ատեն բոլոր իմ հարստութիւնս պիտի տամ ազգին համար. ազգին ազատարար ըլլալը արդէն իմ իդէալս է...

Հարուստ Կեկերօնը դեռ իր խօսքը չէր վերջացուցած, երբ յեղափոխականը՝ որուն համբերութիւնը արդէն հատած էր այս երկար և տաղտկալի խօսակցութենէն՝ բոլորովին կրակ կըտրած ոտքի կելնէ և առանց „մնաք բարով“ ըսելու, ինքզինք դուրս կը նետէ հարուստին գրասենեակէն, մէկ մ՚ալ անոր սեմէն ներս ոտք չը կոխելու պայմանաւ:

Իսկ հարուստը կը ժպտեր իր տարած յաղթանակին համար. նա իւր նպատակին հասած էր:

ԽԱՅԹՈՒՑ.

Յ. Գ. — Ի պատիւ հայ հարուստներուն՝ սատանան իմ ականջիս կը փսփսայ.

—Ամեն կանոն իր բացառութիւններն ունի:

Կուզեմ հաւատալ սատանային: ՆՈՑՆ.

ԼՕՆԴՕՆ. „ՀՆՉԱԿԻ“ ՏՊԱՐԱՆ.

ուրներին և նրանց ճակատագիրը կապելով ինչ որ գերմարդկային համարված նախապաշարումների հետ գրգռում են նրանց մէկ ուրիշ նոյնանման հազարաւորների դէմ, որոնք իրանց բաղդը կապել են տարբեր աւանդութիւնների հետ...

Պօնտոսի մայրաքաղաքն իր ամենափայլուն և ծաղկած ժամանակ, երբ Ստրաբօն իր ժամանակի աշխարհագրական պատմութիւնն էր գրում և իր ծննդավայրի գեղեցկութիւնը և նրա ծաղկած վիճակը պատկերացնում, այն էլ այնպիսի մի ժամանակ, երբ դեռ մարդը բոլորովին զուրկ էր ներկայիս քաղաքակրթութիւնից եւ նրա ձևերից, մարդ ինքնիրան աւելի ազատ պէտք է։ Համարեա և աւելի երջանիկ, քան 19-երորդ դարուս վերջերը, երբ քաղաքակրթութիւնն իր ամբողջ ձևերով տակաւին անպօր է հանդիսանում փոխել մէկ արմատացած ժառանգական վայրենիութիւն, պատերազմը, ընկերսպանութիւնը: Քաղաքականացեալ դարում քաղաքակիրթ համարված պետութիւնների աչքի առջև օր ցերեկով կատարվում են վայրենի դարերին արժանի տխուր իրողութիւններ:

Իսկ թիւրքը, նախապատմական դարերից մնացած վայրենիների այդ մնացորդը... Օ՜, չէ կարելի առանց քստմնելու ձեռք տալ նրա պատմութեան, մի պատմութիւն, որ միլիոնաւոր անմեղների արիւնով է գրվել և ուր ամեն կարգի բարբարոսութիւն կարելի է գտնել, և այդ բարբարոսութիւնը շարունակվում է հէնց այսօր մի և նոյն ստիճանով և միևնոյն սաստկութեամբ, ինչպէս էր հնում....

Փողոցները դատարկվել էին: Հայ թաղերում մի փոքրիկ ձայն անգամ չէր լսվում: Թիւրքական թաղերում և զահվէտներում կարելի էր լսել խումարբաշների գոռում գոչումը, նրանց սպառնալիքները միմեանց դէմ, հարբածների այլանդակ ձայնը: Մի ժամ վերջ արդէն այդ ձայներն էլ սկսան կամաց-կամաց նուազել և քաղաքը թաղվեցաւ խոր լռութեան մէջ:

Ամբողջ երկնակամարը ծածկվել էր արդէն սև սպառնացող ամպերով:

Երեք մարդ դուրս գալով Նոր-Խանի կից փողոցից դէպի Եէշիլ-Ըրմագի եզերքը, կանգ առին: Մի չորրորդը ձեռքը հասարակ մի լապտեր բռնած լուսաւորում էր նրանց և առաջնորդում: Հրդեհից այրված մի մեծ շէնքի մնացորդները սև կմախքների պէս ցցված մնացել էին. լապտերի աղօտ լոյսի տակ նրանք այնպէս էին պատկերացած, որ կարծես դժոխքից դուրս ցցած լինէին իրանց գլուխներն անց ու դարձերը դիտելու համար: Մեր երեք մարդիկը փայտեայ կամուրջի անկիւնում բոլորվեցան և ըսկսան ցածր ձայնով խօսել: Փայլակը միշտ լուսաւորում էր իր պարբերական լուսով ամբողջ տարածութիւնը և երևան հանում ամպերի ընպառնացող սև դէմքերը:

—Դամը երեքից արդէն անցել է և դեռ չէ երևում, ասաց նրանցից մէկը, լապտերի լուսով ժամացոյցին նայելով:

—Երևի հանըմն այսօր լաւ ընդունելութիւն է արած, քսակը լեքը տուն գնաց:

—Ես գրաւ եմ դնում, որ նա ամենաքիչը մէկ օխա խմած կը լինի:

—Արդէն մէկ օխայից աւելի խմեց երեկոյեան, իմամի փոր չէ եա՛, խէրն օրհնած:

(Կը շարունակվի)

ՎԻԹ.